1903

ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆԸ

Նախերգանք

Այստեղ, անցվոր էս աշխարհում
Խարխափելով ապիկար,
Հուր հավատով քեզ ենք փարում,
Հո՜ւյս երկնային, լույս անմար։

5 Եթե մեր կյանքն և ինչ ունենք
Պատրանք են ողջ անցավոր,
Պատրանքներից վրսեմն ես դու
Եվ ըսփոփանք մեծազոր։

Իսկ թե ունես մարդուն անհայտ
10 Անհաս խորհուրդ հաստատուն,
Ողջո՜ւյն, անմահ դու ճառագայթ,
Որ շողում ես մեր հոգուն։

Լուսավորի՛ր մեր մութ ճամփան
Դեպի աշխարհն երջանիկ,
15 Ուր փոխվել են և այժըմ կան
Մեր սիրելիք, մեր նախնիք։

Գուցե նըրանց հավերժացած
Հայացքն ես դու կենդանի,
Որ ժըպտում ես տըգեռներիս
20 Անճառ ծոցից անհունի։